ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# Գ Ի Տ Ու Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

# Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «14» օգոստոս, 2020 թ.

## Հ Ր Ա Մ Ա Ն № 20-Ա/Ք

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի օգոստոսի 12-ի N 1028-Ա/2 հրամանով հաստատված «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգի» 1-ին կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Կազմակերպել գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման հայտերի ընտրության մրցույթ:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ռուզան Ասատրյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Հավելված
ՀՀ ԳԿ նախագահի
«14» օգոստոս 2020 թ.
N 20- Ա/Ք հրամանի

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեն կազմակերպում է գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման հայտերի ընտրության ՄՐՑՈՒՅԹ:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունների կամ բուհերի կողմից ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի/սարքավորումների ձեռք բերման նպատակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի օգոստոսի 12-ի N 1028-Ա/2 հրամանով հաստատված «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգի»:

Մրցույթի հայտի ձևը զետեղված է Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am «Գիտական գործունեություն» բաժնի «Հայտերի ձևեր» ենթաբաժնում:

Հայտը ներկայացվում է կազմակերպության ղեկավարի գրավոր դիմումով՝ առձեռն (ք.Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ), փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22, ՀՀ գիտության կոմիտե) կամ էլեկտրոնային փոստով (info@scs.am):

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2020 թվականի սեպտեմբերի 18-ը:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունից՝ աշխատանքային օրերին ժամը 14:00 - 17:00, հեռախոսներ՝ 010-210-140 (*113) / 043-496-364; 010-210-140 (*116) / 077-465-831:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե